«Շիրակի ուսուցիչների միություն» գիտակրթական կենտրոն ՀԿ
վերապատրաստող կազմակերպություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա- **Արվեստի ուսուցման կարևորությունը դպրոցում**

Դպրոց - ՀԱՊՀ Գյումրու մասնաճյուղ Ավագ դպրոց

Առարկա -Կերպարվեստ

Ուսուցիչ - Ռոզա Պապոյան Սամվելի

Ղեկավար՝ Կարինե Ալեքսանյան

ԳՅՈՒՄՐԻ 2023թ.

Բովանդակություն

Ներածություն----------3

Գլուխ առաջին: Կերպարվեստի դասավանդման նպատակը և

խնդիրները----------5

Գլուխ երկրորդ: Արվեստի տեսակները և դասավանդման մեթոդները:

----------7

Եզրակացություն----------16

Օգտագործված գրականության ցանկ----------17

Ներածություն

Արվեստը յուրաքանչյուր պետության, քաղաքի և մարդու կյանքի անբաժանելի մասն է: Այն իրականության պատկերավոր արտացոլումն է, որի հիմնական նպատակը մարդուն ծանոթացնելն է գեղեցիկի, զգայականի, հետաքրքիրի հետ: Արվեստը մեծ դեր է խաղում մեր կյանքում, այն մեզ ստիպում է մտածել մեր շուրջ եղած կարևոր խնդիրների և իրադարձությունների մասին, առանց արվեստի կյանքը կլինի միապաղաղ, ձանձրալի, անիմաստ:

Երաժշտությունը, կինոն, թատրոնը, գրականությունը, նկարչությունը, ճարտարապետությունը արվեստի տեսակներն են, որով երկրները, ազգերը ներկայանում և իրենց հետք են թողնում պատմության մեջ:

Արվեստը հասարակական գիտակցության ձև է, մարդու ստեղծագործ աշխատանքի և հոգևոր մշակույթի տեսակ, իրականության ճանաչման յուրահատուկ եղանակ: Արվեստի իրականությունն արտացոլում է գեղագիտորեն, գեղարվեստական կերպարների միջոցով: Արվեստի արտացոլման առարկան իրականության գեղագիտական երևույթներն են՝ կյանքի ողբերգական կամ հերոսական, վեհ կամ նսեմ և հատկապես գեղեցիկ կողմերը: Իրականության գեղագիտական ճանաչումը, մարդու գեղարվեստական ստեղծագործությունը իրացվում է արվեստի տարբեր տեսակների միջոցով:

Սակայն արվեստի տարբեր ճյուղերի միջև սահմանները հարաբերական են, նրանք երբեմն միահյուսվում կամ զուգակցվում են իրար: Իրականության գեղարվեստական արտացոլումն ու ճանաչումը բարերար ներգործություն է ունենում մարդկանց գիտակցության, զգացմունքների վրա, որովհետև արվեստում արտահայտվածը հարաբերակցվում է արվեստագետի իդեալի հետ: Արվեստագետի իդեալը իր ժողովրդի, դասակարգի կամ սոցիալական խմբի ձգտումների, իղձերի արտացոլումն է: Պատկերելով իր ժամանակի տգե՛ղ, այլանդակ երևույթները՝ արվեստագետը ժամանակակիցներին ստիպում է այդ երևույթները վերապրել անբարյացակամության զգացումով և ձգտել դեպի գեղեցիկը, վեհը: Արվեստի ծագման և էության մասին առաջացել են զանազան տեսություններ: Այն համարել են կենսաբանորեն մարդուն տրված «բացարձակ ոգու», «աստվածային հայտնության» արդյունք: Արվեստը ծագել է դեռևս քարի դարում: Նախնադարյան արվեստը

անմիջականորեն միահյուսվել է նյութական արտադրության, մարդկանց աշխատանքային գործունեության հետ, կազմել նրա շարունակությունը։ Այն եղել է նաև չմասնատված՝ միահյուսված ձևով միաժամանակ ընդգրկել արվեստի գրեթե բոլոր տեսակների տարրերը։ Հետագայում, պատմական առաջադիմության և մշակույթի զարգացման հետ միասին, արվեստի և արտադրության կապը դառնում է միջնորդավորված։ Առաջանում են արվեստի տարբեր տեսակներ՝ գեղանկարչություն քանդակագործություն, Ճարտարապետություն,գրականություն,երաժշտություն պարարվեստ, դեկորատիվ կիրառական արվեստ, թատերական և կինո արվեստ։

Արվեստի ծաղկումը Վերածննդի դարաշրջանում պայմանավորված էր ֆեոդալիզմի և միջնադարյան աստվածաբանական աշխարհայացքի դեմ հասարակության առաջադեմ ուժերի պայքարով, թեև դարաշրջանի բանաստեղծներն ու նկարիչները օբյեկտիվ պատճառներով չէին կարող ազատվել այդ աշխարհայացքի կապանքներից։ Վերածննդի (Ոչ միայն Վերածննդի) ներկայացուցիչների համար գեղեցիկը և ընդհանրապես գեղագիտականը անխզելիորեն կապված էր ժամանակի բարոյական և քաղաքացիական խնդիրների հետ։ Մարքսիզմ-լենինիզմի կլասիկները ցույց են տվել, որ արվեստը վերնաշենքային երևույթ է, պաշտպանում և ամրապնդում է իր բազիսը, սերտ փոխգործողության մեջ է այդ բազիսի և վերնաշենքի այլ ձևերի (բարոյականություն, քաղաքականություն, կրոն և այլն) հետ։ Արվեստի այդ առանձնահատկությունը համոզիչ կերպով ցույց են տվել մարքսիստական գեղագիտական մտքի ականավոր ներկայացուցիչներ Գ. Պլեխանովը, Ա. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Ա. Լունաչարսկին, Ֆ. Մերինգը, Պ. Լաֆարգը։ Մարքսիզմ-լենինիզմի կլասիկները հատուկ նշանակություն էին տալիս ռեալիստական արվեստին, որը հնարավորություն է ընձեռում ավելի լավ, խոր, համակողմանի և պատմականորեն ճշմարտացի արտահայտել հասարակական հարաբերությունները, մարդկանց վերաբերմունքը միմյանց և բնության նկատմամբ։ Ռեալիզմը, ասում է Ֆ. Էնգելսը, պահանջում է տիպիկ բնավորությունները պատկերել տիպիկ պարագաներում։ Ռեալիզմի բարձրագույն ձևը սոցիալիստական ռեալիզմն է։ Սովետական Միության, սոցիալիստական մյուս երկրների արվեստի գործիչները իրենց գեղարվեստական ստեղծագործություններում արտահայտում են մեր դարաշրջանի էությունը, առաջավոր մարդկության կյանքն ու պայքարը։

Գլուխ առաջին: Կերպարվեստի դասավանդման նպատակը և խնդիրները

Կերպարվեստը, որպես հանրակրթական դպրոցի ուսումնական առարկաներից մեկը, իր ուրույն տեղն ունի սովորողների դաստիարակության և ուսուցման գործընթացում: Ուսումնական ծրագրի հետ համապատասխան կերպարվեստը որոշակի խնդիրներ է առաջադրում.

1. Ակտիվորեն ներգործել բազմակողմանի, ներդաշնակորեն զարգացած և կրթված հասարակության անդամների ձևավորման, երեխաներին օգնել ճանաչել շրջապատող աշխարհը: Զարգացնել դիտողականությունը, տրամաբանորեն մտածելու կարողությունը, տեսածի գիտակցումը: Զարգացնել տարածական մտածողությունը, պատկերացումները:

2. Տալ սովորողներին ռեալիստական նկարի հիմունքների տարրական գիտելիքներ, ձևավորել բնօրինակից, հիշողությամբ, պատկերացմամբ նկարելու հմտություններ, ծանոթացնել դեկորատիվ կիրառական արվեստի ոլորտում աշխատանքի առանձնահատկությունների հետ, երեխաների մոտ զարգացնել կերպարվեստային ընդունակություններ, ստեղծագործական երևակայություն:

3. Նպաստել սովորողների գեղագիտական դաստիարակությանը: Զարգացնել երեխաների ստեղծագործակամ ընդունակությունները, դաստիարակել գեղարվեստական ճաշակ: Երեխաների մոտ զարգացնել գեղագիտական զգացմունքներ և գեղեցիկի հասկացում, դաստիարակել հետաքրքրություն և սեր արվեստի հանդեպ:

4. Կերպարվեստի ուսուցման ժամանակակից փուլի կարևորագույն խնդիրը սովորողների ազատ մտածելու, ստեղծագործելու կարողությունների մշակումն ու զարգացումն է:

Դիտարկենք այս խնդիրները առավել մանրամասն

Կերպարվեստի դասավանդումը դպրոցում ամենից առաջ հանրակրթական նպատակներ է հետապնդում: Հիմնական խնդիրը սովորողների ընդհանուր աշխարհայացքը ընդլայնելն է , նպաստել բազմակողմանի զարգացած անհատականության դասատիարակմանը, կանոնավոր կերպով բարձրացնել

սովորողների կրթվածության աստիճանը: Դպրոցում կերպարվեստի դասերը մեծ հնարավորություն են ստեղծում անհատի զարգացման համար: Նկարչությունը նպաստում է `սովորողների բազմակի զարգացմանը՝ այն զարգացնում է և' մտավորը, և'գեղագիտականը: Նկարչությունը օգնում է ճանաչել շրջապատող աշխարհը, զարգացնում է տեսողական հիշողությունը, տարածական մտածողությունը և պատկերացումները: Այն մարզում է աչքաչափը և սովորեցնում է ճանաչել բնության գեղեցկությունը, սովորեցնում մտածել և զգալ: Նկարելիս երեխաները առավել խորն են ճանաչում շրջապատող աշխարհը: Նրանք ուշադրությամբ ուսումնասիրում են առարկաների ձևերը, դրանց կառուցվածքը, համաչափությունները, դիրքը տարածության մեջ, գունային հարաբերակցությունները և դրանով հանդերձ վարժվում են դրանց առավել արդյունավետ, բազմակողմանի, խորացված և հստակ ընկալմանը: Տեսողական ընկալման զարգացման ներքո հասկանում ենք երեխաների մոտ նպատակաուղղված դիտելու, երևույթները և առարկաները իրար հետ համեմատելու, նմանությունները և տարբերությունները որոշելու, առարկաները ըստ ձևի դասակարգելու կարողությունների դաստիարակումը: Նկարչությունը զարգացնում է երեխաների ստեղծագործական մտածողությունը, խորացնում և ընդհանրացնում է շրջապատող իրականության մասին նրանց պատկերացումները: Փորձը ցույց է տվել, որ այն դպրոցները, որտեղ լավ հիմքերի վրա է դրված նկարչության դասավանդումը, այնպիսի շրջանավարտներ են ունենում, որոնք կարողանում են ցանկացած ոլորտում իրենց կարողությունները և գիտելիքները կիրառել: Ուսուցիչը պետք է ցույց տա երեխաներին հայրենի բնության գեղեցկությունը, տեղանքին հատուկ ձևերի բազմազանությունը և գույները: Բնապատկեր նկարելիս երեխաները ուսումնասիրում են շրջակա բնությունը՝ ծառերի տեսակները, ծաղիկները, լեռները, շրջապատող աշխարհի զանազան ձևերը: Կերպարվեստի պարապմունքները դպրոցում խնդիր է առաջադրում երեխաների մեջ զրգացնել այնպիսի որակներ, ինչպիսիք են կազմակերպվածությունը աշխատանքում, գիտակցաբար և ըստ պլանի աշխատելու կարողությունը: Նկարի կատարման գործընթացը նպատակաուղղված աշխատանք է հանդիսանում: Նկարելիս աշակերտը իր առջև որոշակի նպատակ է ունենում և ձգտում է հասնել դրան: Նա ձգտում է հաղթահարել աշխատանքի ընթացքում առաջացող դժվարությունները և

հասնել հաջողության: Որոշակի նպատակի հասնելու համար սեփական ուժերը կենտրոնացնելու կարողությունը հսկայական նշանակություն ունի մարդու համար, հետագա ամբողջ կյանքում: Կերպարվեստի պարապմունքները սովորողների առջև պլանաչափ աշխատելու մշտական պահանջ է դնում (նկատի ունենք պատկերի կատարման մեթոդական հաջորդականությունը):

Աշխատանքում գիտակցականության և հաջորդականության պահանջը օգտակար աշխատանքային ունակություններ է մշակում: Այս որակները անհրաժեշտ է ընդգծել, քանի որ մանկավարժության մեջ դրանք հսկայական դեր են խաղում:

Գլուխ երկրորդ: Արվեստի տեսակները և դասավանդման մեթոդները:

Դարերի ընթացքում դպրոցը բավականին մեծ փորձ է կուտակել երեխաներին դասավանդելու գործում: Այսպիսով, հայեցակարգի, ուսուցման տարբեր մեթոդների և սկզբունքների կիրառման արդյունավետության վերաբերյալ կան տարբեր տեսակետներ: Ուսուցման գործընթացը բավականին բարդ երևույթ է, և այն չի կարող ներկայացվել որպես ուսուցչի կողմից գիտելիքների պարզ փոխանցում այն սովորողներին, ովքեր դեռ չունեն այդ գիտելիքները: Այստեղ, բնականաբար, հարցեր են առաջանում. «Ի՞նչ սովորեցնել» և «Ինչպե՞ս դասավանդել»: Դիդակտիկայի խնդիրն է՝ ուսումնական գործընթացի օբյեկտիվ զարգացման մասին գիտելիքների հիման վրա պարզել, թե ինչպես են դրա զարգացման օրենքների հիման վրա մշակվում ուսուցման սկզբունքներն ու կանոնները, որոնք ուսուցչին առաջնորդում են իր գործնական աշխատանքում: Ճիշտ և հմտորեն կազմակերպված, դիդակտիկ սկզբունքների և դասավանդման մեթոդիկայի մեթոդաբանորեն իրավասու օգտագործումը արվեստի և կերպարվեստի դասերին նպաստում է ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

- Արվեստն օգնում է սովորողներին զարգացնել ստեղծագործական խնդիրներ լուծելու հմտություններ:

• Արվեստի ուսուցումն օգնում է երեխաներին զարգացնել շարժիչ հմտությունները, սոցիալական հմտությունները, որոշումներ կայացնելը, ռիսկի դիմելը և հնարամտությունը:
• Օգնում է գրավել այն աշակերտների ուշադրությունը, որոնք այլ կերպ չեն ուզում ինտեգրվել դասապրոցեսի մեջ:
• Խթանում է քննադատական մտածողությունը՝ սովորեցնելով աշակերտներին ավելի զգույշ և մանրամասնորեն զննել շրջապատող աշխարհը:
• Սովորեցնում է աշակերտին մարտահրավեր նետել ինքն իրեն բոլոր մակարդակներում:
• Արվեստը կապում է աշակերտին, ինչպես սեփական մշակույթի, այնպես էլ ավելի լայն աշխարհի հետ:
• Այն ձևավորում է աշակերտի հոգևոր նկարագիրը, նրանց զգացմունքներն ու մտքերը:
• Արվեստի միջոցով աշակերտը, անգամ ենթագիտակցորեն, կարողանում է արտահայտվել, ինչն էլ դաստիարակության կարևոր խթան է հանդիսանում:
• Բացահայտում է աշակերտի ստեղծագործական ներուժը:
• Աշակերտը սովորում է գեղարվեստական որոշակի տերմիններ և դրանց իմաստները:
• Գեղարվեստական գործերը քննարկելիս աշակերտի մոտ ձևավորվում է նախորդ կետում նշվածները ճիշտ օգտագործելու ունակություն:
• Գեղարվեստական գործերը քննարկելիս նրա մոտ զարգանում է քննադատական դատողությունը:
• Ստեղծագործական աշխատանքը նպաստում է դրական ինքնագնահատականի և ինքնավստահության ձևավորմանը:
• Աշակերտի նկարներում արտացոլվում է նրա հոգեբանական զարգացումը, ինչն էլ կարող է ահազանգել նրա բնականոն զարգացման խաթարման մասին:
• Աշակերտը սովորում է խմբային աշխատել և համագործակցել:

Կերպարվեստը միավորում է գեղանկարչությունը, քանդակագործությունը, գրաֆիկան, դեկորատիվ-կիրառական արվեստը: Ի տարբերություն տարածական

արվեստների ոչ պատկերային տարատեսակների, կերպարվեստը արտացոլում է իրականությունը և տարածության մեջ ստեղծում է դիտարկելի ակներև կերպարներ։ Կերպարվեստի ստեղծագործություններում պատկերված գործողությունը խտացած, կենտրոնացած է մեկ պահի մեջ, արտաքուստ ստատիկ է և չի զարգանում ժամանակի ու տարածության մեջ ինչպես թատերական արվեստում, պարարվեստում կամ երաժշտության մեջ, սակայն դա չի խանգարում գաղափարներ մտքեր ու ապրումներ արտահայտելուն՝ չկորցնելով մեծ արվեստի իր ուժը։

Գեղանկարչությունը արվեստի տարածական տեսակներից տարբերվում է կյանքի երևույթները գույների, լուսաստվերի և գծերի միջոցով վերարտադրելու եղանակով՝ հարթության վրա տեղափոխելով իրական տարածական չափումները։ Գեղանկարչությանը մատչելի են թե մարդու,թե նրան շրջապատող միջավայրի պատկերումները, դրանում են արտահայտվում նրա առավելությունները քանդակագործության հնարավորությունների առավելությամբ։ Օգտագործելով գույնը, գիծը և լուսաստվերը գեղանկարիչն իրականությունը վերարտադրում է նրան ամբողջ գունեղ հարստությամբ։ «Գեղանկարչությունը բացբերան արվեստ չէ և դրանում է, ըստ իս նրա բարոյական մեծ արժեքը, -գրել է ֆրանսիական ռոմանտիզմի ներկայացուցիչ,գեղանկարիչ Դելակրուան…Գեղանկարչությունը առաջ է բերում առանձնահատուկ հույզեր, որպիսիք չի կարող ստեղծել ոչ մի այլ արվեստ։ Այդ տպավորությունները ստեղծվում են գույնի, լուսաստվերի խաղի որոշակի դասավորությամբ,մի խոսքով այն ամենով ինչը կարելի է անվանել նկարի երաժշտություն»։ Գեղանկարչական ստեղծագործությունը կերտվում է զանազան նյութերով և տեխնիկայով։

Քանդակագործությունը, ճարտարապետության նման,արվեստի ծավալային-տարածական տեսակ է։ Քանդակագործը իրական աշխարհը ստեղծում է նյութապես շոշափելի ծավալային ձևերով, որոնք առկա են տարածության մեջ և լուսավորության պայմաններում։ Քանդակագործության գլխավոր թեման միշտ եղել է մարդը, որի արտաքին շոշափելի պատկերի միջոցով բացահայտվում է նրա ներքին հոգևոր աշխարհը, վսեմ զգացմունքները, մեծ ձգտումները, ուժեղ բնավորությունը, բարդ հոգեբանական վիճակները։ Բոլոր կողմերից մշակված քանդակի

առանձնահատկություններն արտահայտվում են նրանում, որ մարդու կերպարը կարող է ընկալվել տարբեր դիտակետերից, որոնք ստեղծում են նոր տպավորություններ, կերպարը բացահայտվում է տարբեր տեսանկյուններից, շարունակ փոփոխվող ստվերներով: Այսպիսով քանդակն ասես մուտք է գործում իրական շրջապատ և տարածության ու ժամանակի մեջ կարող է ընկալվել իր ամբողջ բազմազանությամբ:Ֆրանսիացի քանդակագործ Ֆալկոնեն իր «Մտորումներ քանդակագործության մասին» գրքում գրել է. «Հարկավոր է, որ ստեղծագործությունն առանձնանա օդի, ծառերի ճարտարապետության ֆոնում, իր մասին հայտարարի հեռու՝ այն տարածությունից, որտեղից կարելի է նկատել: Լույսը և ստվերները ազատորեն տարածվելով, նույնպես կմրցեն իրար հետ՝ որոշելու համար գլխավոր ձևերը և ընդհանուր տպավորությունը»: Քանդակագործն ինքն է ընտրում իրեն համար համապատասխան նյութը, մարմարը սպիտակ է, անբիծ ու մեծ հնարավորություններ է տալիս մարդկային կերպարը քանդակելու համար: Գրանիտը, բազալտը, ծիրանաքարը դժվարությամբ են ենթարկվում մանրամասն մշակման: Բրոնզով կարելի է լիակատար արտահայտել դինամիկ վիճակներ, այն օժտված է լույսի անդրադարձման ընդունակությամբ և ուժեղացնում է ուրվագծերի հստակությունը: Փայտը հրապուրում է ջերմությամբ, բաղադրիչ մասերի և մակերևույթի մշակման ձևերի բազմազանությամբ:Բացի բոլորակերտ քանդակից, գոյություն ունի ունի ռելիեֆային (ուռուցիկ) քանդակ, որը կարող է լինել բարձրաքանդակ (գոռելիեֆ), հարթաքանդակ (բառելիեֆ) և խորաքանդակ (կոնտրռելիեֆ):

Իր նշանակությամբ քանդակը լինում է հոյակերտ-կոթողային (մոնումենտալ), հաստոցային, պարկային և գեղազարդային (դեկորատիվ): Կոթողային քանդակը խոր գաղափարներն արտահայտում է կարճ ու կտրուկ (լակոնիկ) ձևերով: Հաստոցային քանդակը, որը նախատեսվում է մոտիկ տարածության վրա ընկալելու, ինչպես նաև ինտերիերներում տեղադրելու համար, հաճախ լուծում է հոգեբանական բարդ խնդիրներ (օրինակ՝ դիմանկարում): Գեղազարդային (դեկորատիվ) քանդակն օգտագործվում է ճարտարապետության հիմնական բաժանումներն արտահայտելու և կենցաղը զարդարելու համար:

«Գրաֆիկա» բառը ծագում է հունարեն «գրաֆո» գրում եմ, բառից: Գծանկարչության մեջ որոշիչը նկարելն է, առավել բնորոշ արտահայտչական տարրերն են գիծը և նրբագիծը, լույսի և ստվերի աստիճանավորությունը, սպիտակ ու սև բծերի հարաբերությունը, դրանց համադրման հակադրությունը կամ մեղմությունը: Գծանկարչության մեջ գույնը հազվադեպ է օգտագործվում, սակայն տարատեսակ դարձնելով սևի ու սպիտակի հարաբերակցությունները, նկարիչը ստեղծում է բազմերանգության և երանգային բազմազանության պատրանք, ֆակտուրայի միջոցով նա կարող է վերարտադրել նյութի զգացողություն: Գծանկարչության մեջ մտնում է նկարը (մատիտով, գրչով,ածխով,սանգինայով,վրձնով՝թղթի վրա, խազերով՝ մետաղի,քարի վրա)… Գծանկարչությունը կարելի է ստորաբաժանել. Հաստոցային (ինքնուրույն կառուցումներ), գրքի նկարազարդում և ձևավորում, լրագրային ամսագրային նկարներ, ինչպես և կիրառական: Գծանկարչությունը ծնունդ է առել ժայռերի,խեցեղենի,մետաղի վրա նախնադարյան մարդու կողմից գծանշված, ոսկորի վրա փորագրված նկարներից: Ինչպես նաև հին ռելիեֆային պատկերները:

Դասավանդման մեթոդների հայեցակարգը և դրանց դասակարգումը

Ուսուցման մեթոդը բարդ հասկացություն է: Այնուամենայնիվ, չնայած ուսուցիչների կողմից այս հայեցակարգին տրված տարբեր սահմանումներին, հնարավոր է նշել ընդհանուր մի բան, որը մերձեցնում է նրանց տեսակետները: Հեղինակներից շատերը հակված են դասավանդման մեթոդը դիտարկել որպես սովորողների կրթական և ճանաչողական գործունեության կազմակերպման միջոց:Դասավանդման մեթոդները հասկացվում են որպես ուսուցչի և աշակերտների միջև փոխգործակցության մեթոդների հաջորդական փոփոխություն, որոնք ուղղված են կրթական նյութի մշակման միջոցով որոշակի նպատակի հասնելուն:

«Մեթոդ» (հունարեն ՝ «ճանապարհ դեպի մի բան») - նպատակին հասնելու միջոց, գիտելիք ստանալու միջոց:

Ակնհայտ է, որ ուսման գործընթացում մեթոդը գործում է որպես ուսուցչի և սովորողների փոխկապակցված գործունեության կարգավորված միջոց ՝որոշակի կրթական նպատակներին հասնելու համար: Այս տեսանկյունից ուսուցման յուրաքանչյուր մեթոդ օրգանականորեն ներառում է ուսուցչի ուսուցողական

աշխատանքը (նոր նյութի ներկայացում, բացատրություն) և ուսանողների ակտիվ կրթական և ճանաչողական գործունեության կազմակերպումը: Այսինքն ՝ ուսուցիչը մի կողմից ինքն է բացատրում նյութը, իսկ մյուս կողմից ՝ նա ձգտում է խթանել ուսանողների կրթական և ճանաչողական գործունեությունը (խրախուսում է նրանց մտածել, ինքնուրույն եզրակացություններ կազմել և այլն): Ներկայումս հայտնի են դասավանդման մեթոդների տասնյակ դասակարգումներ: Այնուամենայնիվ, ներկայիս դիդակտիկ միտքը հասունացել է այն հասկացողության համար, որ չպետք է ձգտել հաստատել մեթոդների մեկ և անփոփոխ նոմենկլատուրա: Սովորելը ծայրաստիճան շարժական, դիալեկտիկական գործընթաց է: Մեթոդների համակարգը պետք է դինամիկ լինի ՝այս շարժունակությունն արտացոլելու համար, հաշվի առնելու մեթոդների կիրառման պրակտիկայում անընդհատ տեղի ունեցող փոփոխությունները:

Սովորելը բաղկացած է այնպիսի գործողություններից, ինչպիսիք են առաջադրանքների լուծումը և արդյունքների գնահատումը, փորձարկումն ու սխալը, հասկացությունների ընտրությունը և կիրառումը:

Ուսուցման բոլոր մեթոդները բաժանված են երեք մեծ խմբերի.

- կրթական և ճանաչողական գործունեության կազմակերպման և իրականացման մեթոդները.
- կրթական և ճանաչողական գործունեության խթանման մեթոդներ.
- ուսումնական և ճանաչողական գործունեության արդյունավետության վերահսկման և ինքնավերահսկման մեթոդներ:

Ուսուցման գործընթացում մեթոդը գործում է որպես ուսուցչի և սովորողների փոխկապակցված գործունեության կարգավորված միջոց ՝որոշակի կրթական նպատակներին հասնելու համար, որպես սովորողների կրթական և ճանաչողական գործունեության կազմակերպման միջոց:

ա) Ուսուցչի կողմից գիտելիքների բանավոր ներկայացման և սովորողների ճանաչողական գործունեության բարձրացման մեթոդներ. պատմություն, բացատրություն, դասախոսություն, զրույց;

բ) Ուսումնասիրված նյութի բանավոր ներկայացման մեթոդ:

գ) Ուսումնասիրված նյութի համախմբման մեթոդները. զրույց, դասագրքի հետ աշխատանք;

դ) Սովորողների ինքնուրույն աշխատանքի մեթոդները ՝ նոր նյութը հասկանալու և յուրացնելու համար. աշխատանք դասագրքի հետ, գործնական աշխատանք;

ե) Ուսումնական աշխատանքի մեթոդները գործնականում գիտելիքների կիրառման և հմտությունների ու կարողությունների զարգացման համար. վարժություններ, գործնական վարժություններ.

զ) Սովորողների գիտելիքների, հմտությունների և ունակությունների ստուգման և գնահատման մեթոդներ. Սովորողների աշխատանքի ամենօրյա դիտում, բանավոր հարցադրում (անհատական, դիմային, կոմպակտ), դասի կետի սահմանում, թեստեր, տնային առաջադրանքների ստուգում, ծրագրավորված հսկողություն:

Տեսողական արվեստի և գեղարվեստական աշխատանքի ուսուցման հիմնական մեթոդները: Մեթոդների դասակարգումը ՝ ըստ ուսուցչի և սովորողների գործունեության մեթոդների, բնութագրվում է գեղարվեստական աշխատանքի և կերպարվեստի դասին, քանի որ այս առարկաների դասավանդման ընթացքում ավելի հստակ են հայտնվում երկու փոխկապակցված գործընթացներ՝ ուսանողների գործնական անկախ գործունեությունը և ուսուցչի առաջատար դերը:

Ըստ այդմ, մեթոդները բաժանված են 2 խմբի.

1. Սովորողների ինքնուրույն աշխատանքի մեթոդներ ուսուցչի ղեկավարությամբ:
2. Ուսուցման մեթոդներ:

Ուսուցման մեթոդներ, որոնք որոշվում են ստացված գիտելիքների աղբյուրով, ներառում են 2 հիմնական տեսակ.

. բանավոր

. տեսողական

. գործնական

Հմտությունների և կարողությունների ձևավորումը կապված է սովորողների գործնական գործունեության հետ: Դրանից բխում է, որ սովորողների գործունեության տեսակը պետք է դրվի հմտությունների ձևավորման մեթոդների հիմքում:

Սովորողների գործունեության տեսակների համաձայն մեթոդները բաժանվում են.

- Վերարտադրողական:
- խնդրահարույց:
- Ուսումնասիրություն:
- բացատրական և նկարագրական:

Վերոհիշյալ բոլոր մեթոդները կապված են կրթական և ճանաչողական գործունեության կազմակերպման մեթոդների հետ (Yu.K. Babansky- ի դասակարգում): Հաշվի առնելով գեղարվեստական գործի և կերպարվեստի դասերին կրթական գործունեության խթանման մեթոդը `արդյունավետ է օգտագործել ճանաչողական հետաքրքրություն ձևավորելու մեթոդը: Մի մոռացեք նաև օգտագործել հսկողության և ինքնատիրապետման եղանակը: Կրթական և ճանաչողական գործունեության կազմակերպման և իրականացման մեթոդները սովորողների կրթական և ճանաչողական գործունեության կազմակերպմանը միտված ուսուցման մեթոդների մի խումբ է, որը հայտնաբերվել է Յու.Կ.-ի կողմից: Բաբանսկին ևս ներառում է ուսուցման բոլոր մեթոդները, որոնք առկա են ըստ այլ դասակարգումների ` ենթախմբերի տեսքով:

Արվեստի կարևորությունը դպրոցում: Դպրոցը կրթություն ստանալու և աշակերտներին ապագայի համար նախապատրաստելու համար է: Հենց սկզբից այն ձևավորում է աշակերտներին, թե ովքեր են նրանք մեծանալու և ինչով են զբաղվելու: Երեխաների մոտ հետաքրքրություն առաջացնելու համար՝ նրանք պետք է ամեն ինչից մի քիչ սովորեն: Դպրոցը ոչ միայն պետք է տա տեղեկություններ տարբեր ոլորտների մասին, այլև սովորեցնի լրացուցիչ գիտելիքներ փնտրելու կարողություն: Դպրոցները կենտրոնանում են ստանդարտ թեստավորման վրա և կարևորում միավորները բարելավելը, այսպիսով, զբաղեցնում են ուսուցիչների և աշակերտների միտքը, չթողնելով նրանց ստեղծագործ և նորարար լինել: Ահա, այստեղ, օգնության է գալիս արվեստը: Գեղարվեստական կրթությունը կենսական նշանակություն ունի

աշակերտների համար: Նրանք ունենում են հնարավորություն ուսումնասիրելու իրենք իրենց, իրենց մշակույթը, հասարակությունը: Արվեստի դասերին մասնակցելով նրանք սկսում են այլ կերպ պատկերացնել աշխարհը: Բայց անհրաժեշտ է ուղղորդել և զարգացնել սովորողներին որակյալ արվեստի դասերի միջոցով՝ նրանց հասկացողությունն ու հարաբերությունները շրջապատող աշխարհի հետ ավելի լավը դարձնելու համար: Արվեստի դասերը աշակերտների վրա կարող են ունենալ այնպիսի ազդեցություն, որը չի կարող տալ որևէ այլ առարկա: Նկարչությունը զարգացնում է երեխայի ստեղծագործական կարողությունը, մտածողության գործընթացը և արտահայտվելու ձևը: Արվեստը կարևոր հատկանիշ կլինի անհատների համար: Այն նրանց օգուտ կբերի ոչ միայն անձնական, այլև մասնագիտական առումով, քանի որ աշխարհի լավագույն գործատուները կնախընտրեն աշխատանքի ընդունել ամենաստեղծարար և ամենանորարար անհատներին: Իսկ կերպարվեստի ուսուցիչները կօգնեն ուղղորդել երեխայի մտավոր զարգացումը: Գեղարվեստական կրթության կարևորությունը կարելի է հասկանալ սովորողների կողմից ձևավորվող սովորությունների միջոցով: Աշակերտները արվեստ ստեղծելիս բացահայտում են նոր բաներ, այնուհետև, կարողանում են նոր գիտելիքները կիրառել առօրյա կյանքում: Աշակերտները սկսում են ամենինչին ստեղծագործ մոտեցում ցույց տալ, ինչն էլ կարող է արդյունավետ լինել այլ առարկաներ սովորելիս: Արվեստի նախագծերը երեխաներին սովորեցնում են արդյունավետ լուծումներ գտնելու և դրանցից սովորելու արժեքը: Գեղարվեստական կրթությունը էական է աճի և զարգացման համար, քանի որ երեխաները ոչ միայն ստեղծագործական ունակություններ են արտահայտում, այլև կյանքի կարևոր դասեր են սովորում:

Եզրակացություն

Կերպարվեստի հիմնախնդիրների դասավանդման ժամանակ մեթոդները կիրառելիս կարևորվում են երկու կողմերի համագործակցային աշխատանքը, համախմբվածությունը, սովորողի լիարժեք մասնակցությունն ուսուցման գործընթացին, սովորող-սովորեցնող զույգի փոխհարաբերություններում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորումը: Ընդհանրացնելով ներկայացվածը կարող ենք ավելացնել, որ կերպարվեստը միավորում է գեղանկարչությունը, քանդակագործությունը, գրաֆիկան, դեկորատիվ-կիրառական արվեստը: Ի տարբերություն տարածական արվեստների ոչ պատկերային տարատեսակների, կերպարվեստը արտացոլում է իրականությունը և տարածության մեջ ստեղծում է դիտարկելի ակներև կերպարներ: Կերպարվեստի ստեղծագործություններում պատկերված գործողությունը խտացած, կենտրոնացած է մեկ պահի մեջ, արտաքուստ ստատիկ է և չի զարգանում ժամանակի ու տարածության մեջ ինչպես թատերական արվեստում, պարարվեստում կամ երաժշտության մեջ, սակայն դա չի խանգարում գաղափարներ մտքեր ու ապրումներ արտահայտելուն՝ չկորցնելով մեծ արվեստի իր ուժը: Դասընթացն իրականացվում է երկու հիմնական բաժիններով՝ ստեղծագործական գործունեություն և արվեստի միջոցով իրականության ընկալում: Կերպարվեստի ուսումնական գործունեությունը իրակացվում է խառը ուսուցման ձևաչափով ելնելով՝ թեմայի բովանդակությունից, առաջարկվող գործունեության ձևերի բնույթից, դասի նպատակից, դասարանի, սովորողների, ուսումնասիրվող նյութի, քննարկվող հիմնախնդրի առանձնահատկություններից, առկա հնարավորություններից և այլ հանգամանքներից: Առաջարկվում է կիրառել դեմ առ դեմ և առցանց ուսուցման եղանակները՝ համադասարանական, անհատական, զույգերով և փոքր խմբային աշխատանքների միջոցով: Ուսուցումն իրականացվելու է համապատասխան նկարակալներով, դազգահներով, երաժշտական գործիքներով, տեխնիկապես հագեցած, արվեստի սենյակներում կամ դպրոցական արվեստանոցներում: Ուսումնական գործընթացում, կարող են ընտրվել

ուսումնական գործունեության այլընտրանքային տեսակներ։ Կերպարվեստի զարգացման կարևոր գրավականը կադրերի պատրաստումն է։

Կարիք ունեցող երեխաները, որոնք ունեն դժվարություններ ոչ միայն ընկալման, ուշադրության կենտրոնացման, հիշողության, հուզական ոլորտում այլ նաև նուրբ շարժունակության՝ ձեռքի դաստակի օգտագործման, մատիտը պահելու և գործածելու ժամանակ։ Խիստ կարևորվում է կերպարվեստի դասերի ժամանակ երեխայի ձեռքի մատիտի ճիշտ շարժումների համակցումով գծային վարժությունների, գունավորելու, պատկերները եզրագծելու համար։ Կարիք ունեցող երեխաները հակված են բնության յուրահատուկ ընկալմամբ.աշխատանքի պրոցեսում հաղթահարում են կաշկանդվածությունը, ոգևորվում են, դառնում են ավելի ինքնավստահ և ինքնուրույն։

Կերպարվեստի դասերին ունեցած հաջողությունները դառնում են ազդակ, որ սովորողը հաղթահարի իր վախերը և հաջորդ դասերին առավել տրամադրված կատարի առաջադրանքը։ Ամփոփելով նշենք, որ ներառական կրթություն իրականացնելիս յուրաքանչյուր դպրոցի նշանաբանը պետք է լինի հետևյալը՝ Ներառական կրթությունը, ոչ թե բարեգործություն է , այլ կրթության իրավունքի ապահովման հնարավորություն։

Գրականության ցանկ

https://skudelnica.ru/hy/love/metodika-prepodavaniya-izo-didakticheskie-principy-i-metody.html

Սուքիասյան Մ., Մանկավարժական տեխնոլոգիաների դերը ուսուցման գործընթացում, ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, 1.2 (12), Երևան, 2016: